Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝

Դեռահասների հոգեբանական առանձնահատկությունների իմացություն

Կազմեց՝ Ժաննա Մարգարյան

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Դպրոց՝ Արծվանիկի միջնակարգ դպրոց

Կապանի N2 ավագ դպրոց<<ՊՈԱԿ>>

Վերապատրաստող կազմակերպության անվանում

Կապան 2023

Բովանդակություն

1.Ներածություն – էջ 3

1.Տարիքային հոգեբանության առարկան, նշանակությունը և խնդիրները-4

2.Մանկավարժական և տարիքային հոգեբանության մեթոդները-5-6

3.Դեռահասության շրջանի հոգեբանական առանձնահատկությունները Դեռահասության շրջանի ընդհանուր բնութագիրը-7

4.Դեռահասի հոգեախտորոշում. հոգեախտորոշման փուլերը-8

5.Դեռահասի իմացական գործընթացի զարգացվածության մակարդակի ախտորոշում-9

6.Անձնավորության զարգացումը դեռահասության տարիքում-10-11

7.Դեռահասի ուսումնական գործունեության առանձնահատկությունները և մտավոր զարգացումը-12-13

8.Եզրակացություն-14

9 .Օգտագործված գրականություն- 15

10. Հավելվածներ-16

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել տարիքային հոգեբանության դրույթները, նշանակությունը , դեռահասների ուսումնական գործառույթները և մտավոր զարգացումը: Մանրակրկիտ ներկայացված է դեռահասության տարիքի առանձնահատկությունները: Նշեցինք, որ դեռահաս տարիքը ուսուցման և դաստիարակության համար ավելի դժվար տարիք է համարվում: Այդ տարիքում տեղի է ունենում ինտենսիվ նաև անհավասարաչափ ֆիզիկական զարգացում: Դեռահաս տարիքում ֆիզիկական զարգացման ամենակարևոր գործոնը սեռական հասունացումն է: Կատարել ենք հոգեախտորոշում տարբեր փուլերով: Դեռահասի հետ շփվելիս անհրաժեշտ է հանդես բերել հնարամտություն, հրաժարվել կտրուկ կարգադրություններ ու հրամաններ անելուց; Հիմնականում խոսվում է նաև անձնավորության բարոյական դաստիարակության, զարգացման և բարոյական բնութագրի մասին: Հետաքրքրությունները դեռահասության տարիքում հաճախ ստանում են խիստ հափշտակության ձև, ինչը դեռահասի կյանքում բացասական բնույթ է կրում: Դեռահասի ուսումնական գործունեության առանձնահատկություններից նշել ենք ուսումնական գործունեության մի շարք գործոններ՝ գիտակից վերաբերմունք ուսման նկատմամբ, զարգանում են դեռահասի հետաքրքրությունները և դառնում խոր և բովանդակալից: Էական փոփոխությունների են ենթարկվում ուշադրությունը, հիշողության բարդ զուգորդությունները, տեղաշարժեր են նկատվում մտածողական գործունեության մեջ, տարիքի համար կարևոր առանձնահատկություններից է նաև ստեղծագործական մտածողության ձևավորումը: Նշվեց նաև դեռահասների աշխատանքային գործունեության տարիքային առանձնահատկությունները:

Թեմայի խնդիրները՝ ծանոթացում մանկավարժական հոգեբանության մեթոդներին

-տարիքային հոգեբանության խնդիրները

-անձնավորության զարգացումը դեռահասության տարիքում

Թեմայի գործնական առանձնահատկությունները ՝ Հետազոտական աշխատանքը կօգնի ուսուցիչներին, դասղեկներին, ծնողներին առավել ճիշտ կազմակերպել աշխատանքային գործունեությունը դեռահասների հետ:

Տարիքային հոգեբանության մասին, նշանակությունը և խնդիրները

Յուրաքանչյուր երեխա մի ցայտուն անհատականություն է: Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի ղեկավարման համար պահանջվում է յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման մեթոդիկայի իմացություն, կրտսեր դպրոցականի, դեռահաս և պատանեկան տարիքի երեխաների ֆիզիոլոգիայի, դպրոցական հիգիենայի հիմունքների իմացություն, նաև՝ հոգեբանական գիտելիքների իմացություն:

Յուրաքանչյուր երեխա օժտված է բնավորության, վարքի, կամքի, հուզական կյանքի իրեն յուրահատուկ առանձնահատկություններով : Եվ նրանցից յուրաքանչյուրը պահանջում է անհատական մոտեցում: Անհնարին է ճիշտ դաստիարակել երեխային, չիմանալով, նրա՝ որպես ուրույն մի անձնավորության ձևավորման ընթացքի հոգեբանական օրինաչափությունները: Յուրաքանչյուր տարիք ունի իր դժվարությունները և պահանջում է իր նկատմամբ յուրահատուկ մոտեցում: Իսկ անհատական տարբերությունները ուսուցչի համար իմանալն անհրաժեշտ է, ինչը հնարավորություն կտա խուսափելու սխալներից: Դաստիարակության և ուսուցման տեսության ոչ մի հարց չի կարող հաջողությամբ մշակվել առանց տարիքային հոգեբանության հիմունքների իմացության. չսահմանափակվել նեղ փորձառական ուսումնասիրությամբ, այլ ուսուցիչը պետք է հետազոտի երեխայի կյանքը և գործունեությունը բնական պայմաններում;

Մանկավարժական հոգեբանությունն ուսումնասիրում է աշակերտների անձնավորության ձևավորման ընթացքը, օրինաչափություններն ու տարբերությունները; Այն ուսումնասիրում է նաև ուսուցչի աշխատանքի և անձնավորության առանձնահատկությունները, որոնք ապահովում են ուսումնադաստիարակչական աշխատանքի հաջողությունը; Թե՛ մանկավարժական, թե՛ տարիքային հոգեբանությունը հիմնվում են ընդհանուր հոգեբանության վրա; Թե՛ մեկը ,թե՛ մյուսը հավակնություն չունեն տալու ուղղակի դեղամիջոցներ, պարզապես դրանք օգնում են մեզ ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար:

Մանկավարժական և տարիքային հոգեբանության մեթոդները

Տարիքային և մանկավարժական հոգեբանության հետազոտության մեթոդները պիտանի են սովորողների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար; <<Եթե մանկավարժությունը ցանկանում է մարդուն դաստիարակել բոլոր տեսակետներից, ապա նա պետք է նրան ճանաչի բոլոր տեսակետներից>>,-գրել է Կ.Դ. Ուշինսկին:

Մեթոդները , որոնք փոխադարձաբար լրացնում և ստուգում են միմյանց, հետևյալներն են. **դիտում, զրույցի մեթոդ , հարցազրույց, տարբեր տեսակի ու տիպի դիտափորձեր, դպրոցականի գործունեության, հարցաթերթիկների լրացում** և այլն; Հիմնական մեթոդներից մեկը **դիտման մեթոդն է**: Պետք է աշակերտին ուսումնասիրել ուսուցման և դաստիարակության բնական պայմաններում: Դպրոցականի ուսումնասիրությունը պետք է կատարվի ոչ թե ուսումնադաստիարակչական աշխատանքից կտրված, այլ այդ աշխատանքի հետ օրգանական միասնության մեջ: Պետք է աշակերտին դիտել՝ ելնելով մարդկային անձնավորության ամբողջականության սկզբունքից, այսինքն՝ վերլուծական-համադրական տեսակետից: Անձնավորության բազմակողմանի ճանաչման համար անհրաժեշտ է հենվել ամենօրյա պլանաչափ ,սիստեմատիկ դիտումների շնորհիվ ստացված կոնկրետ, ստուգված փաստերի վրա; Աշակերտի անձնավորության առանձնահատկությունները հասկանալու համար պետք է նրան դիտել ձևավորման պայմանների , շրջապատի միջավայրի հետ սերտ կապի մեջ; Անձնավոնության առանձնահատկությունները պետք է դիտել զարգացման ,շարժման մեջ, նրան ուսումնասիրելով շատ թե քիչ տևական ժամանակամիջոցի ընթացքում: Դպրոցականին անհրաժեշտ է ուսումնասիրել կոլեկտիվում, որպես այդ կոլեկտիվի անդամ: Դիտման միջոցով լիարժեք արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անձնավորության դրսևորումների բազմազանությունը, դրանք ուսումնասիրել պլանաչափ կերպով, սիստեմատիկ ամեն օր: Ուսումնասիրելով աշակերտների անձնավորության արտաքին դրսևորումները, անհրաժեշտ է ճիշտ հասկանալ նրանց գործողությունների և արաքների դրդապատճառները: Կարևոր է նաև աշակերտի **խոսքին** հետևելը **զրույցի մեթոդով**: Այս կերպով մենք տեսնում ենք աշակերտի սառնությունը, կոպտությունը, անտարբերությունը կամ նրբազգացությունը, մեղմությունը, հոգատարությունը, ջերմությունը նայլն: Զրույցի

1.Կ.Դ.Ուշինսկի, հ .8 , 1950, էջ 23

ժամանակ հետազոտողը պետք է ձգտի դպրոցականի հետ լինի բարյացակամ, անկեղծ, վստահելի: Զրույցը պահանջում է հմտություն, կարողություն և այլն:

Զրույցները, հարցաթերթիկներ լրացնելը, շարադրությունները մարդու մասին տեղեկություններ են, որտեղ մենք հաղորդվում ենք աշակերտի մտքերին, ապրումներին, զգացմունքներին: Այս դեպքում դպրոցականը ինքն է արտահայտում, ձևակերպում իր մտքերը, համոզմունքները, հայացքները, զգացմունքները, ապրումները շրջապատի, այս կամ այն երևույթի նկատմամբ: Խոսքի, զրույցի մեթոդով երեխան կարողանում է ինքնադիտում, ինքնավերլուծում կատարել, դա հմտություն է, որով օժտված է երեխան: Բավականաչափ զարգացած ու հմուտ լինելով իր խոսքի մեջ՝ երեխան կարողանում է ճիշտ նկարագրել իր մտքերը, ապրումները, դրդապատճառները, ինչը ընդունակ չէ անելու անգամ հմուտ դիտողը: Սակայն պետք է նշել, որ կան շատ դեռահասներ, որոնք չեն կարողանում վերլուծել իրենց մտքերը, զգացմունքները, լուրջ դժվարությունների առաջ են կանգնում:
Անգելինան սովորում է յոթերորդ դասարանում, նրան ծանոթ եմ հինգերորդ դասարանից: Նա դասերից հետո սպասում է, որ միասին գնանք տուն: Երբ դուրս եմ գալիս դպրոցից ,միանում է ինձ: Մենք զրուցելով գնում ենք տուն: Նա ինձ պատմում է իրենց դասարանի օրվա անցուդարձի մասին: Զրույցից ես հասկանում եմ, որ ինքը դժգոհություններ ունի իրենց դասարանի մի քանի աղջիկներից: Երեխան վստահում է ինձ ու սիրտը դատարկում՝ասելով, որ ոչ մեկի չասեմ: Հերթական դասի ժամանակ ուղղակի, թե անուղղակի կամենում եմ հարթել խոչընդոտը, ինչքանով է ինձ հաջողվում, չգիտեմ: Մի օր , հերթական մեր զրույցի ժամանակ, Անգելինան ասաց, որ ինքը հաշտվել է աղջիկների հետ: Նրանք հասկացել են իրար: Ուրախությունս հայտնեցի նրան;
Հոգեբանության հաջորդ մեթոդներից մեկը **դիտափորձն** է: Տարբերում ենք դիտափորձի երկու տեսակ՝**բնական և լաբորատոր:** Բնական դիտափորձը ուսումնասիրում է դպրոցականին՝ կյանքի ու գործունեության սովորական, բնականոն պայմաններում: Յոթերորդցի Ամալյան դասամիջոցին հոնգուր-հոնգուր լացում էր: Երեխաները ապշած նրան են նայում: Ոչ մեկը չգիտի պատճառը: Իմ հարցին՝ ինչու՞ է Ամալյան լացում, Մարինան պատասխանեց: Պարզվում է՝Գոռը խփում էր Մարինային ու Ամալյային ու փախչում: Ամալյան չի կարողանում տանել, երբ իրեն խփում են ,իսկ Մարինայի համար սովորական է, ինքն էլ է խփում Գոռին: Ամեն բան հարթվեց, Ամալյան հանգստացավ, Գոռն այլևս չի խփի ոչ մեկի:
Լաբորատոր գիտափորձը օգտագործվել է հոգեկան ընթացքի՝ընկալման, հիշողության, մտածողության, երևակայության, հմտությունների, կարողությունների հետազոտություններում; **Տեստը** նույնպես հետազոտման գիտական և ընդունելի **մեթոդ է;**/Տե՛ս հավելվածում/ Տեստերը պետք է գնահատվեն դրականորեն, դրանք վերլուծության, գնահատման մեթոդների միասնականացում է;

Դեռահասության շրջանի հոգեբանական առանձնահատկությունները

Դեռահասության շրջանի ընդհանուր բնութագիրը

Երեխայի զարգացումը դիալեկտիկական բարդ պրոցես է; Զարգացման տարբեր տարիքային փուլերում այն ունի իր որակական առանձնահատկությունները: Տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել երեխայի և դպրոցականի զարգացման մի քանի հիմնական շրջաններ: Հոգեբանական գրականության մեջ ընդունված է համարել, որ դեռահասության շրջանն ընդգրկում է երեխայի կյանքի 11-ից մինչև 17/18 տարեկանն ընկած ժամանակատատվածը: Շ.Բյուլերը դեռահասության տարիքի ժամանակագրական սահմանները բնորոշում է ըստ սեռական հասունացման: Հեղինակը տարանջատում է դեռահասության շրջանը երեք հիմնական փուլերի՝ մինչպուբերտանտ փուլ՝ 11-12 տարեկան, բուն դեռահասության փուլ՝ 12-17տարեկան, պատանեկության՝ 18-21/23 տարեկան: Է. Էրիքսոնի տարիքային պարբերացման մեջ ևս նշվում է 12-18 տարեկաններն ընկած ժամանակահատվածը: Հեղինակը նշում է նաև ,որ դեռահասության շրջանի սահմանները տարբեր են տղաների և աղջիկների միջև. աղջիկների դեպքում դեռահասությունն ավելի շուտ է սկսվում: Լ.Վիգոտսկին, խոսելով դեռահասության շրջանի մասին, նշում է, որ դեռասասի զարգացումը կարող է ընթանալ երկու ուղղությամբ՝ բնական և սոցիալական; Բնական զարգացում ասելով պետք է հասկանալ օրգանիզմի բիոլոգիական զարգացումը, սեռական զարգացումը: Սոցիալական զարգացումն իր մեջ ներառում է ուսուցման, դաստիարակության ընդհանուր խնդիրներ:

Ըստ Վ.Ա.Կրուտեցկիի ընդունված է առանձնացնել երեխայի և դպրոցականի զարգացման հետևյալ հիմնական շրջանները . նորածնային շրջան/մինչև տասը օրական, մանկիկային տարիք/մինչև մեկ տարեկական/, մինչնախադպրոցական տարիք /երեքից մինչև հինգ տարեկան/, նախադպրոցական տարիք/հինգից յոթ տարեկան/, վաղ մանկության տարիք /մեկից երեք տարեկանից մինչև յոթ տարեկան: Դեռահաս տարիքը ուսուցման և դաստիարակության համար ավելի դժվարին է համարվում, քան կրտսեր և ավագ տարիքները:

Վ.Ա. Կրուտեցկի, Մանկավարժական հոգեբանության հիմունքները,Երևան-1976

Դեռահասների հոգեախտորոշում

Հոգեախտորոշման փուլերը

Հոգեախտորոշման աշխատանքների իրականացումը ենթադրում է որոշակի փուլային հաջորդականություն.

--ինֆորմացիայի հավաքում երեխայի մասին
--այնուհետև ընտրել այն գործիքակազմը, որով պետք է իրականացնել ախտորոշումը և կիրառել այն
--մշակել համապատասխան խորհուրդներ՝ ելնելով ստացված արդյունքների վերլուծությունից:

Անամնեստիկ հարցարանը սովորաբար լրացնում է երեխայի մայրը, իսկ հոգեբանը առանձնացնում է այն գործոնները, որոնք կարող էին ազդել երեխայի զարգացման վրա; Ներկայացնենք հարցարանի կազմման մի սխեմա, որը կազմվել է Գ. Բուրմենսկայի կողմից:

-Երեխայի անկետայի տվյալները, տեղեկություններ իր և ընտանիքի տվյալների մասին

-Պերինատալ փուլի մասին տեղեկություններ. մինչծննդյան և հետծննդյան փուլերի մասին ընդհանուր տեղեկություններ

Երեխայի առողջության մասին տեղեկություններ. տրավմաների, վիրահատությունների վերաբերյալ ինֆորմացիա

Որտե՞ղ, ու՞մ կողմից է դաստիարակվել երեխան՝ծննդյան պահից սկսած: Ինչպե՞ս է հարմարվել դպրոցում, մանկապարտեզում և այլն:

Զարգացումը մանկության վաղ փուլում՝մինչ երեք տարեկան. մոտորիկայի զարգացումը ,ի՞նչ դժվարություններ են նկատվել

Երեխայի զարգացումը նախադպրոցական տարիքում. հետաքրքրությունները, կոնֆլիկտները

Երեխայի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում. ե՞րբ է ընդունվել դպրոց. հարաբերությունները աշակերտների և ուսուցիչների հետ

Երեխայի զարգացումը դեռահասության շրջանում. Ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները.հետաքրքրությունները;

Դեռահասի իմացական գործընթացների զարգացվածության

մակարդակի ախտորոշում

20 բառ

Մ. Գ. Բարխատովա

Նպատակ-մտապահման առանձնահատկությունների ախտորոշում
Տարիք-8-15 տարեկան
Հետազոտվողին մտապահման համար առաջարկվում է 20 բառ՝10՝ կոնկրետ, 10 վերացական . գնդակ խղճահարություն,փայտիկ, ավտոմեքենա, քրքիջ, թշնամություն, գրչաման, կատու, թարմություն, զանգ, երջանկություն, տվյալ, ճագար, ամիս, տխրություն ,գլխարկ, գազար, քամի, ուրախություն, վարդ:
8 անգամ երեխան պետք է կարդա այս շարքը: Ամեն անգամ կարդալուց հետո պատք է կրկնի այն բառերը, որոնք մտապահել է. հերթականությունը կարևոր չէ, բոլոր փորձերն ավարտելուց հետո հետազոտվողին հարցնում ենք, թե ինչ սկզբունքով էր փորձում մտապահել:

Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

1-ին և 8-րդ անգամ կրկնելուց հետո հաշվում ենք ճիշտ պատասխանած բառերի քանակը:Քանակական վերլուծություն- միջին գնահատական

Տարիք	1-ին անգամ	8-րդ անգամ
8-9 տարեկան	5	13 բառ
11-12 տարեկան	7	16 բառ
14-15 տարեկան	8	17 բառ

Մտապահման նորմատիվներ

Ցածր մակարդակ-մեխանիկական մտապահում:

Միջին մակարդակ- բարդ բառերը հիշելու համար ձևով /ֆորմալ/ խմբավորման մեթոդն է օգտագործում, օրինակ, կատուն փայտիկով տվյալ գլխարկին և այլն:

Բարձր մակարդակ-բացի մեխանիկականից նաև տրամաբանական վերլուծություններ է կատարում՝բառերի տրամաբանական խմբավորում՝ սկզբում առարկաները, հետո հատկությունները, իմաստային խմբավորում ՝պատմություն հորինելու միջոցով՝ կատուն ու ճագարը երջանկությունից քրքջում են ավտոմեքենայի զանգից և այլն;

Անձնավորության զարգացումը դեռահաս տարիքում

Դեռահաս տարիքը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է: Եթե կրտսեր դպրոցական տարիքում նա գործել է մեծերի՝ ուսուցիչների և ծնողների անմիջական ցուցումով, ապա այժմ նրա համար հիմնական նշանակություն են ստանում վարքի սեփական սկզբունքները, հայացքները, համոզմունքները: Հենց այս տարիքում են դրվում բարոյական գիտակցության հիմքերը: Այդ տարիքում ձևավորվում են նաև դեռահասների բարոյական իդեալները: Դեռահասի համար որպես իդեալ ծառայում է որևէ կոնկրետ մարդ, որի մեջ ինքը տեսնում է իր կողմից բարձր գնահատվող հատկությունների մարմնավորումը, հիմնականում նրանք ծնողներն են , ուսուցիչները, գրքերի, կինոնկարների հերոսները: Դեռահասության տարիքում երեխան զգում է իրեն մեծահասակ, հակադրվում է մեծերի կամքին:

Ծնողական ժողովից հետո Աննայի մայրիկը մոտեցավ ինձ ու ականջիս, հազիվ լսելի, ասաց, որ իր աղջիկը անհնազանդ է, բնավ չի լսում իրեն: Անում է այն, ինչ ինքն է կամենում: Սեպտեմբերի մեկի առթիվ կիսաշրջազգեստ էր գնել աղջկա համար. մի կերպ համոզել էր, որ հագնի: Աղջիկը հագել էր, սակայն դպրոցում փոխել էր հագուստը և տաբատ էր հագել; Ես ցավ ապրեցի Աննայի՝ ծնողի նկատմամբ այդ վերաբերմունքի համար: Հաջորդ օրը դասարանում առաջարկեցի, որ բոլոր աղջիկները կիսաշրջազգեստ հագնեն, պատճառաբանեցի, որ շատ գեղեցիկ կլինի: Բոլորը ընդունեցի առաջարկը: Գովեցի Աննային՝ ինչ գեղեցիկ ես դու կիսաշրջազգեստով և ավելացրեցի՝ երեխանե՛ր, եկեք արժևորենք մեր ծնողների վաստակը, սիրենք նրանց և լինենք հնազանդ նրանց խոսքին:

Դեռահասի անձնավորության զարգացման կարևոր շրջաններից մեկը ինքնագիտակցության ձևավորման շրջանն է: Կրտսեր տարիքում իրեն գնահատելու կարիք չկա; Ինքնագիտակցության պահանջմունքն առաջանում է կոլեկտիվում, մեծերի հետ շփվելիս. պահանջ է առաջանում գնահատել իր հնարավորությունները, գտնել իր տեղը շրջապատում: Շատ կարևոր է այն կոլեկտիվի դերը, որտեղ ապրում և գործում է դեռահասը, որտեղ գոյություն ունեն գնահատման ճիշտ հարաբերություններ: Դեռահասի մեջ առաջանում է դրական հատկություններ, գիտակից և նպատակասլաց զարգացնելու ձգտում: Ինքնադաստիարակման ձգտումով նա կամենում է հաղթահարել բացասական գծերը, վերացնել թերությունները; Անհրաժեշտ է օգնել դեռահասին՝ ճիշտ ըմբռնելու իր արժանիքներն ու թերությունները: Դեռահասության տարիքում կենտրոնական հոգեբանության նորագոյացումը դեռահասի մեջ մեծահասության յուրահատուկ զգացմունքի ձևավորումն է: Մեծ լինելու գիտակցությունը դեռահասի մեջ առաջանում է ոչ պատահականորեն: Նա զգում է իր ուժերի և էներգիայի ընդհանուր աճը: Դեռահասը

տեսնում է իր աճը, ինչպես է մեծանում հասակը, քաշը, ֆիզիկական ուժը, սեռական հատկանիշների ի հայտ գալը և այլն: Այդ տարիքում դեռահասը գերագնահատում է

իր հնարավորությունները, նա հանգում է այն համոզման, որ ինքը գրեթե չի տարբերվում մեծերից և պահանջում է ,որ իր հետ վարվեն հավասարը հավասարին: Դեռահասի հետ շփվելիս պետք է հանդես բերել նրբանկատություն ու հնարամտություն: Մենք չենք կարող անտեսել կամ անտարբեր լինել դեռահասության սիրահարությանը: Այդ փաստի նշանակությունը դեռահաս տարիքում չի կարելի չափազանցնել կամ թե աչք փակել: Դեռահասը այդ տարիքում ունենում է համակրանք, յուրատեսակ առաջին սիրո զգացում: Պետք է լինել շատ զգույշ, կոպիտ , անտակտ միջամտությունը հոգեցունց կանի դեռահասին: Դեռահասը արթնացող զգացմունքի ներգործության տակ կդառնա ավելի մաքուր, ավելի օրինակելի, համեստ, խելացի: Անհրաժեշտ է ընդունել նրանց ինքնուրույնության ու անկախության իրավունքները, ինչ խոսք, նաև վերահսկել, որովհետև դեռահասը դեռ մեծերի կարիքն ունի: Անհրաժեշտ է հրաժարվել կտրուկ կարգադրություններից, հրամաններից: Ավելի լավ է խոսել համոզելու, խնդրանքի տոնով: Հրամայելը հարուցում է բացասական ռեակցիա: Դեռահասի համար հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում մեծերի վարքի օրինակը. մասնավորապես ուսուցիչների անձնական օրինակը: Ուսոցիչները դեռահասին դաստիարակում են ոչ միայն խոսքով, այլև իրենց վարքով: Դեռահասները մեծերի նկատմամբ ունեն քննադատականության դրսևորում: Նրանք հեշտությամբ կարողանում են նկատել մեծերի թերություններն ու վրիպումները՝ արտասանական սխալները, խոսքի ոչ ճիշտ կառույցը ,առանձին հարցերին պատասխանելու անկարողությունը և այլն: Դեռահասների հետ աշխատելիս պետք է հենվել նրանց ինքնուրույնության, ակտիվության նախաձեռության վրա: Մի շարք հետազոտողներ՝ Դ. Բ.Էլկոնին, Տ.Վ.Դրագունովան, դեռահասի կյանքի մի առանձին ոլորտ են համարում դեռահասի շփումը ընկերների հետ: Դեռահասության տարիքում շատ վառ կերպով է դրսևորվում ընկերների հետ շփվելու ձգտումը; Դեռահասության տարիքի համար բնորոշ է անձնական բարեկամության զգացմունքը: Դեռահասների ընկերական և բարեկամական փոխհարաբերությունները ուսումնասիրել է Ի.Վ.Ստրախովը:1 Նա տարբերում է դեռահասների փոխհարաբերությունների երեք հիմնական ձևեր՝ մարդամոտություն, ընկերականություն, բարեկամություն: Մարդամոտությունը ենթադրում է համատեղ աշխատանք, շփում, տարբեր տեսակի փոխօգնություն: Ընկերականությունը ավելի բարդ երևույթ է.սերտ կապ, կարծիքների միասնություն, դատողությունների լայն ու ազատ փոխանակում: Բարեկամությունը ենթադրում է դեռահասների սերտ մոտեցում, հոգեբանական սերտ կապ, հավատարմություն:

1.И.Б.Страхов, Психология дружбы….,Саратов,1969

Միշտ չէ, որ դեռահասների բարեկամությունը կրում է դրական բնույթ: Երբեմն այն առաջանում է անառողջ հետաքրքրությունների, զվարճությունների դատարկ ժամանցի հիման վրա: Մեծ նշանակություն ունի դեռահասի հուզականորեն

երանգավորված ձգտումը ակտիվորեն մասնակցելու կոլեկտիվի կյանքին: Կոլեկտիվում զարգանում է դեռահասի պատասխանատվությունը, համերաշխության ձգտումը, անձնական շահերը կոլեկտիվի շահերին ենթարկելու, նրա համար շատ կարևոր է իր հասակակիցների կարծիքը, կոլեկտիվի գնահատականը իր արարքներին ու վարքին: Հաճախ երեխաները ենթարկվում են բուլինգի: Ինչը մեկ կամ մի քանի անձանց կողմից պարբերաբար կրկնվող բացասական գործողություններն են, որը իրականացվում է ուղղակի և անուղղակի և կիբեռբուլիինգի տեսակով : Ուղղակի կամ անուղղակի պարբերաբար ճնշումները բացասաբար են անդրադառնում դեռահասի հուզակամային ոլորտի վրա; Յոթերորդցի Ալեքսը, Գոռը կՍուրենը համադասարանցի Մարինայի հետևից պարբերաբար կանչում են՝գոնչո-պոնչո, խոզուկ-մոզուկ: Ուսուցիչները, ծնողները պետք է հետևողական լինեն և բացառեն երեխաների իրարնկատմամբ կիրառվող ճնշումները: Դեռահասի համար դասարանցիների կարծիքը ավելի կարևոր է, քան ուսուցիչների կամ ծնողների: Հոգեբան Լ. Ի.Ումանսկու տվյալներով իր հետաղոտած դեռահասների 84%-ը ժամանցը անց է կացնում փողոցային, բակային խմբերում: Ի.Ս. Պոլոնսկին նշում է, որ ոչ բոլոր խմբերը բացասական ուղղվածություն ունեն. դա պարզապես մի հող է, որի վրա կարող է ստեղծվել հակահասարակական գործունեություն:2 Այդ պատճառով ուուցիչները, ծնողները պետք է ուշադրության կենտրոնում պահեն, զննեն, դիտեն և փորձեն նրանց ներգրավել հաարակական կազմակերպություններում:

Դեռահասի ուսումնական գործունեության առանձնահատկությունները և մտավոր զարգացումը

Ընդհանուր աճի հետ միասին զգալիորեն մեծանում է դեռահասի գիտակից վերաբերմունքը ուսման նկատմամբ : Կրտսեր դպրոցական տարիքի համեմատությամբ դեռահասների մոտ նկատելի է **հետաքրքրությունների լայն մակարդակ:** Դա բացատրվում է դեռահասի բարձր աստիճանի մտավոր հասունությամբ: Նոր առարկաների՝ ֆիզիկայի, քիմիայի,կենսաբանության, նորագույն տեխնոլագիան նկատմամբ հետաքրքրությունները մեծանում են ու ընդլայնվում: Որպես դասղեկ յոթերորդ դասանանում նկատում եմ , որ երեխաների ճանաչողական հետաքրքրությունները դուրս են գալիս դպրոցական ծրագրերի

2.И.С.Ролонский, Рсихологические особенски , М.., 1970

շրջանակներից: Հետաքրքրությունները դեռահասության տարիքում ստանում են խիստ **հափշտակության, կրքի ձև** : Եթե դեռահասը հափշտակվում է կինոյով, խաղերով, ֆուտբոլով ,ապա մոռանում է մնացած բոլոր անելիքները, ինչը բացասաբար է ազդում ուսումնական գործընթացի վրա: Եթե անգամ դրական բնույթ

ունեն նրա հափշտակության պատճառները, ապա թե՛ ծնողը, թե՛ դասղեկը պետք է կարողանան ճիշտ կազմակերպել դեռահասի ժամանակը՝ պահանջելով սահմանափակել այն ժամանակը, որ սովորողը նվիրում է սիրած գործին : Յոթերորդցի Ալեքսը անդամակցվել էր Թումոյին, ուսումնասիրում էր ռոբոտաշինություն: Դպրոցից տուն հասնելուն պես հերթով քանդում էր հին էլեկտրատեխնիկայի սարքավորումները: Արդեն հոգնած նստում էր դասապատրաստման, ինչը անարդյունավետ էր ստացվում: Ծնողի և դասղեկի համատեղ աշխատանքում կայունացավ Ալեքսի օրվա ռեժիմը: Իսկ մեկ այլ աշակերտ՝ Սուրենը , հեռախոսային խաղերով էր հափշտակվել: Ծնողի և դասղեկի կողմից պահանջվեց մեծ ջանք , Սուրենին վտանգավոր և անառողջ հափշտակությունից կտրելու համար: Ուսումնական գործունեության բնույթի և ձևի փոփոխությունը, մտքի հարցասիրության աճը դեռահասից պահանջում են ավելի բարձր և կազմակերպված **մտավոր գործունեություն**: Դեռահասը ունակ է դառնում առարկաների և երևույթների ավելի բարդ վերլուծական-համադրական ընկալմանը՝ միջառարկայական, ներառարկայական կապերի տարբերակմանը: Դեռահասության տարիքում էական փոփոխությունների են ենթարկվում **հիշողությունը և ուշադրությունը:** Հիշողությունը և ուշադրությունը աստիճանաբար ստանում են կազմակերպված, կարգավորվող և կառավարվող ընթացքի բնույթ: Դեռահասները սկսում են օգտագործել մտապահելու և մտաբերելու հատուկ եղանակներ: Մտապահելով՝կատարում են համեմատություն, համակարգման դասակարգման հատուկ մտածողական աշխատանք: Մեխանիկական մտապահումը գնալով իր տեղը զիջում է տրամաբանական, իմաստային մտապահմանը, բարելավվում է հիշողության արդյունավետությունը: Դեռահասի հիշողության առանձնահատկություններից է **բարդ զուգորդությունների** առկայությունը , այսինքն՝ նոր նյութի կապը հնի հետ: Դա ապահովում է տարբեր ուսումնական առարկաների նյութի կապը, միասնականությունը: Դեռահասության տարիքում մտածողական գործունեության մեջ նույնպես տեղի են ունենում փոփոխություններ; Ձևավորվում են նաև ակտիվ, ինքնուրույն **ստեղծագործական մտածողության** ձևավորում: Վերջում անհրաժեշտ է խոսել դեռահասների **աշխատանքային գործունեության** առանձնահատկությունների մասին: Դեռահասները դրսևորում են ակտիվություն, մեծ լինելու զգացմունք, կոլեկտիվում առաջինը լինելու, աշխատանքի նկատմամբ հետաքրքրասիրություն ,ստեղծագործական մոտեցում և այլն: Դեռահասության տարիքը հետախույզ մտքի ,իմացության նկատմամբ անհագ ձգտման տարիք է, մեծ եռանդի, բուռն ակտիվության, գործունեության ծարավի տարիք:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մանկավարժական և տարիքային հոգեբանությունը՝ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա ընդհանուր և մանկավարժական

հոգեբանության գիտելիքների իմացություն: Յուրաքանչյուր տարիք ունի իր դժվարությունները և պահանջում է անհատական մոտեցում:
Թե՛դաստիարակության, թե՛ ուսուցման հարցում չի կարելի առանց հոգեբանության հիմունքների իմացության հաջողության հասնել:
Տարիքային և մանկավարժական հոգեբանության մեթոդները փոխկապակցված են իրար հետ: Հարցազրույցի ,դիտման, հարցման,տեստերի մեթոդների նպատակն է դեռահասին ուսումնասիրել բնական պայմաններում՝պլանաչափ, սիստեմատիկ:
Երեխայի զարգացումը բարդ դիալեկտիկական պրոցես է: Զարգացման տարբեր տարիքային փուլերում ունի որակական առանձնահատկություններ և զարգացման մի քանի շրջաններ:
Դեռահասների հոգեախտորոշման աշխատանքները իրականացվում են որոշակի փուլային հաջորդականությամբ՝ երեխայի մասին ինֆորմացիայի հավաքմամբ, տեղեկություններ ընտանիքի մասին նայլն: Մտապահման առանձնահատկություն-ների ախտորոշման նպատակով կատարեցինք հետազոտում ըստ Մ.Գ.Բարխատովայի, և տրվեց արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն:
Դեռահասը այս տարիքում ձեռք է բերում բնավորության կամային գծեր՝ հաստատակամություն, դյուրագրգռություն , աշխարհայացքի ձևավորում և այլն: Դե, ինչ խոսք, դեռահասը կարող է նաև սիրահարվել: Պետք է լինենք շատ զգույշ, չէ՞որ առաջացող զգացմունքը կարող է տարբեր ձևերով ազդել նրա վրա:
Դեռահասի մոտ ընդհանուր աճի հետ միասին մեծանում է գիտակից վերաբերմունքը ուսման նկատմամբ: Մեծանում են հետաքրքրասիրությունները: Փոփոխության են ենթարկվում հիշողությունը, ուշադրությունը, ստեղծագործական մտածողությունը , բարդ զուգորդումները, նաև հետաքրքրություն է դրսևորում աշխատանքային գործունեության նկատմամբ:

Այսպիսով՝ դեռահասության տարիքը, ինչպես նշվեց, հետախույզ մտքի, իմացության նկատմամբ անհագ ձգտման տարիք է, մեծ եռանդի, բուռն ակտիվության, գործունեության ծարավի տարիք:

Գրականություն

1. Վ.Ա. Կրուտեցկի ,մանկավարժական հոգեբանության հիմունքները,<<Լույս>>, 1956

2.Ա. Վ.Պետրովսկի, Ընդհանուր հոգեբանություն, <<Լույս>>, 1974

3.Ա. Խուդոյան, Դեռահասների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց,<<Վէլաս Պրինտ>> ՍՊԸ, 2018, Մեթոդական ձեռնարկ

4.Պիտեր վան Դոմմելեն, Դաստիարակության դրական մոտեցումներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան-2017

5.И.Б.Страхов, Психология дружбы….,Саратов,1969

6.И.С.Ролонский, Рсихологические особенски , М.., 1970

7.Կ.Դ.Ուշինսկի, հ .8 , 1950, էջ 23

Հավելվածներ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ

Անհատական մոտեցում ցուցաբերելով՝ մենք կկարողանանք համատեղել անհատական և խմբային ուսուցումը: Բնորոշ է, որ ուսումնական խմբի անդամները տարբեր են իրենց կրթական կարիքներով, առանձնահատկություններով, հետաքրքրություններով, իսկ մեր նպատակն է ուսումնական խմբի համար իրականացնել ընդհանուր կրթություն:Ես կազմակերպում եմ ինքնուրույն աշխատանք, որի ընթացքում սովորողները պատասխանում են հինգ հարցերի:

1.Գրեք,թե ինչ նոր բան սովորեցիք դասի ընթացքում;

2.Հարցին պատասխանեք ըստ նոր նյութի բովանդակության/փաստերով, անուններով,իրադարձություններով և այլն/

3.Ըստ նմուշ-օրինակի կատարեք առաջադրանքը:

4.Կատարեք առաջադրանքը վերափոխումով:

5.Գտե՛ք թեմայի կապը ուսումնական այլ առարկաների հետ:

Եթե սովորողը բոլոր առաջադրանքները ճիշտ է կատարել, ապա ապահովված է աշակերտի ուսումնառության ստեղծագործական մակարդակը:

Այնուհետև ուսուցիչը փորձում է որոշել աշակերտների մոտիվացիոն պահանջմունքային և զգացմունքա-կամային ոլորտների զարգացման մակարդակը: Անձի ուսուցման ու դաստիարակության ոլորտում էական նշանակություն ունի հոգևոր կրթությունը: Ոչ մի պատիժ ու արգելք չեն կանգնեցնում դեռահասին ապահասարակական վարքագիծ չդրսևորելու համար: Արգելքների ու պատիժների ձևերը տվյալ դեպքում քիչ արդյունավետ մեթոդներ են կանխելու կամ փոխելու դեռահասի ապահասարակական վարքագիծը:Որպեսզի մանկավարժական գործունեության մեջ հասնենք դրական արդյունքների, մենք պետք է օգնենք դեռահասին՝ գործնականում ճանաչելու, բացահայտելու ինքն իրեն: Իսկ հարկադրանքի, պատժի, տույժի մեթոդով մենք ոչ մի հաջողության չենք հասնի, ավելին, երեխային կվանենք մեզանից, միջավայրից ,շրջապատից: Եթե երեխան ծանր, հուզական ապրումներ է ունենում դասարանում,ապա նա իր համար ընկերական միջավայր է ստեղծում դրսում:Մեզ համար շատ կարևոր է բացահայտել երեխայի հեղինակության զգացումը ինչպես դասարանում, այնպես էլ ընկերական շրջապատում: Կատարում եմ հետևյալ կերպ՝գնահատեք ինքներդ ձեզ:

<<Բարի 1,2,3,4,5,6,7,8,9,10 չար>>

<<Խելացի 1,2,3,4,5,6,7,8,9,10 անխելք>>

<<Նախաձեռնող1,2,3,4,5,6,7,8,9,10 պասսիվ>>

<<Կարգապահ1,2,3,4,5,6,7,8,9,10 անկարգ>> և այլն: 16

Դասի պլան

Դասարան՝ 7-րդ **Առարկան՝** Գրականություն

Ուսուցիչ՝ ժաննա Մարգարյան **Դպրոց՝**Արծվանիկի միջնակարգ դպրոց **Դասի տևողությունը՝ 45ր** **Դասի տիպը՝ Համակցված դաս** **Ամսաթիվ՝**	
Թեմա	**Վահան Թոթովենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը**
Նպատակ	1.Ձևավորել գիտելիքներ Թոթովենցի կենսագրության և ստեղծագործության մասին, 2. Պատկերացում տալ գրողի ապրած ժամանակաշրջանի և նրա մարդկային նկարագրի մասին
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Վերարտադրել գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը, քարտեզագրել երկրային ուղին, (Հ1. վերլուծի և ընկալի գրական հայերեն տեքստեր) 2.Ուրվագծել գրողի կերպարը պատմական ժամանակաշրջանի համայնապատկերին, կատարել եզրահանգումներ, արտահայտել դիրքորոշում, (Հ29. վերլուծի ու ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ)
Խնդիրներ	1. Առանձնացնել գրողի կյանքի ուշագրավ փաստերը, քարտեզագրել, նրա պատմվածքների սցենարներով նկարահանված ֆիլմերից հատվածներ դիտել և քննարկել, 2. Մեկնաբանել պատմական ժամանակաշրջան- գրողի մարդկային նկարագիր փոխազդեցությունը,կանխատեսել գրողի ճակատագիրը այլ ժամանակաշրջանում, 3. Ստեղծել բանավոր կամ գրավոր երկխոսություն գրողի հետ նրա որևէ տարիքում, ընտրել համապատասխան մեղեդի:
Ընթացքը	ԽԻԿ համակարգով Խթանման փուլ՝ 10ր մեթոդը՝ մտագրոհի Իմաստի ընկալում՝ 25ր մեթոդը `5րշարադրություն, Վ/դիագրամ, Կշռադատում՝ 10ր մեթոդը՝գուս
Գնահատում	միավորային
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, պատմություն, կինոարվեստ, Երաժշտություն, աշխարհագրություն
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Ժամանակ և տարածություն, անհատներ և հարաբերություններ, պատճառ և հետևանք, անհատական և մշակութային արժեհամակարգ:
Անդրադարձ	Բարոյական ի՞նչ դասեր քաղեցինք:
Անդրադարձ	Որտե՞ղ և ինչպե՞ս կկիրառենք սովորածը:
Տնային աշխատանք	Ստեղծել ինքնակենսագրական պատումի պատառիկներ:

Դասարան՝ 7-րդ **Առարկա՝** Գրականություն **Ուսուցիչ՝** Ժաննա Մարգարյան **Դպրոց՝** Արծվանիկի միջնակարգ դպրոց Դ/տևողությունը՝45ր Դ/տիպը՝հաղորդման Ամսաթիվ՝	
Թեմա	**Ստեփան Զորյան «Մի կյանքի պատմություն» Դաս 1**
Նպատակ	• Պատկերացում տալ «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական պատումի, հուշի, սյուժեի մասին: • Զարգացնել ճանաչողական ունակությունները(տարատեսակ կերպարները, ժամանակաշրջանը, տեքստի գեղագիտությունը):
Վերջնարդյունք	• Կարողանա մտքերն անկաշկանդ շարադրել և ներկայացնել ստեղծագործության մեջ առկա պատկերավորման միջոցները: *(Հ31) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.)* • Կարողանա ցույց տալ դեպքերի հաջորդական ընթացքը և բացահայտել գրական կերպարի զարգացումը: *(Հ32) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.)* • Կարողանա ճանաչել և առանձնացնել ստեղծագործության որևէ հատվածի կերպարներին: *(Հ41) ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն.)*
Խնդիրներ	• Դուրս գրել անծանոթ բառերը, իմաստը ճշտելով՝ ներկայացնել դասարանին, ընդգծել գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները: /կառուցվածք և գործառույթ • Կարողանա ցույց տալ գրական կերպարի զարգացումը՝ համեմատելով սեփական և ծնողների կյանքի հետ: /անհատներ և հարաբերություններ • Համեմատել կարդացած ինքնակենսագրական վեպերի հատվածները(«Միլեհտարի պարտեզներ», «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», «Մի կյանքի

	պատմություն»), ցույց տալ նմանությունները և տարբերությունները /կառուցվածք և գործառույթ • Ներկայացնել հեղինակի ընտանիքը և համեմատել իր ընտանիքի հետ: /կայունություն և փոփոխություն
Ուս.նյութեր	Դասագիրք, բնագիրը, նկարներ
Միջառարկայական կապեր	Պատմություն,աշխարհագրություն,ՏՀՏ
Գնահատում	միավորային

Ընթացքը՝ ԽԻԿ Խթանման փուլ՝ 10 ր հայտորոշիչ տեստ,Նշել ժամանակաշրջանը, հերոսներին Իմաստի ընկալման փուլ՝25 ր Տ-աձև քարտային աշխատանք,դաս.բաժանել երկու մասի, բառային և տեքստային աշխատանք,հատվածաբար ընթերցում և վերարտադրում Կշռադատման փուլ՝ 10ր Գուս ի՞ն չ իմացա, Ի՞նչլսեցի,ի՞նչ տեսա	
Խաչվող հասկացություններ	Տարածություն,ժամանակ,
Տնային հանձնարարություն	Բնութագրել հերոսներին
Անդրադարձ	Առանձնացնի առավել կարևոր փաստերը և հիմնավորի հետաքրքիր էր | հասկացա, որ
Այլ նշումներ	

Դասի պլան

Դասարան՝ 7-րդ **Առարկան՝** Հայոց լեզու **Ուսուցիչ՝** Ժաննա Մարգարյան **Դպրոց՝** Արծվանիկի միջնակարգ դպրոց Դասի տևողությունը՝ Դասի տիպը՝Հաղորդման Ամսաթիվ՝	
Թեմա	**Բայի դիմավոր ձևեր. դեմք,թիվ, ժամանակ,եղանակ**
Նպատակ	1.Ձևավորել գիտելիք բայի դեմքի,թվի,ժամանակի, եղանակի վերաբերյալ 2. Զարգացնել սովորողների ճանաչողական, ստեղծագործական կարողությունները

	3. Ամրապնդել դիմավոր ձևերի՝ դեմքի, թվի,ժամանակի կարգի իմացությունը
Վերջնարդյունք	**1.**Ճանաչել բայի դեմքի, թվի, ժամանակի, եղանակի հատկանիշները *Հ1) վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր* 2. Համեմատի տարբեր կազմության բայերն իրար հետ: *Հ31 արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.* 3. Խոնարհել դիմավոր բայերը:Որոշել բայերի դեմքը, թիվը,եղանակը, ժամանակը: *Հ29) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.*
Խնդիրներ	**1.** Չափածո ստեղծագործություններում գտնել բայերը,որոշել ժամանակը Օրինաչափություն 2.Տեքստում ցույց տալ ներկա ժամանակով կիրառված բայերը , վերաշարադրել անցյալ ժամանակով և ներկայացնել պատմողաբար Պատճառ և հետևանք 3.Տրված նկարները համապատասխանեցնել ճիշտ ժամանակով:Ժամանակ և տարածություն
Ուսումնական նյութեր	Դասագիրք,գծապատկերներ, պաստառներ
Միջառարկայական կապեր	Գեղարվեստական գրականություն, ֆիզիկա
Գնահատում	միավորային
Խաչվող հասկացություններ	Կայունություն և փոփոխություն
Ընթացք	Նախորդ դասընթացներին անցածի ամփոփում,ամրակայում **ԽԻԿ** համակարգով **Խթանման** փուլ -5րոպե մեթոդը՝գուս,մտագրոհ Նշել բայի հատկանիշները, բերել օրինակներ **Իմաստի** ընկալման փուլ-25րոպե Т-աձև, Վենի դիագրամ դաս.ը բաժանել երկու խմբի, քարտային աշխատանք, աշխատանք տեքստում,կարճ շարադրություն **Կշռադատման** փուլ-15րոպե Քառաբաժան ամփոփում
Տնային հանձնարարություն	Տրված բառակապակցություններով կառուցել կապակցված խոսք
Անդրադարձ	Քառաբաժան Ի՞նչը դուր եկավ, ի՞նչ նոր բան սովորեցի և այլն

Ուսուցման եղանակների գնահատում/թեստ/

Այս թեսթի միջոցով կարելի է պարզել, թե աշակերտն ինչպես է ավելի լավ ընկալում եւ մշակում տեղեկատվությունը: Պետք է

յուրաքանչյուր հարցի մոտ նշել առավել հարմար պատասխանը: Արդյունքները պահվում են գաղտնի:

Հաճախ Երբեմն Հազվադեպ

1.Ես թեման ավելի լավ եմ հիշում, եթե դրանից հետո նորից բացատրում են եւ

քննարկում ենք:

2. Ինձ համար ավելի հեշտ է, երբ հանձնարարված դասը համառոտ ներկայացվում

է գրատախտակի վրա:

3. Ես սիրում եմ գրառումներ անել՝ հետո վերանայելու համար:

4. Կցանկանայի, որ դասարանում լինեին պաստառներ, մոդելներ, իրական

նմուշներ:

5. Ես դժվարանում եմ հասկանալ դիագրամները, գրաֆիկները կամ ուղղորդող

նշանները:

6. Ինձ հաճելի է ձեռքերով աշխատելը կամ առարկաներ պատրաստելը:

7. Ինձ հետաքրքիր է աղյուսակներ եւ գրաֆիկներ գծելը:

8. Ես կարող եմ միանգամից կռահել, երբ կրկնվում են հնչյունները:

9. Թեման ավելի լավ եմ կարողանում հիշել,երբ մի քանի անգամ գրում եմ թղթի

վրա:

10. Ես հեշտությամբ կարողանում եմ հասկանալ ուղղությունները եւ հետեւել

դրանց քարտեզի վրա:

11. Առարկաները ես ավելի լավ եմ սովորում լսելով:

12. Ես միշտ խաղում եմ գրպանիս մեջ եղած մետաղադրամներով կամ

բանալիներով:

13. Ես ավելի լավ եմ անգիր անում՝ խոսքերը բարձրաձայն կրկնելով, քան թղթի

վրա գրելով:

14. Ես նորություններն ավելի լավ եմ հասկանում՝ թերթում կարդալով, քան ռադիոյով լսելով:

15. Սովորելու ժամանակ ես միշտ ինչ-որ բան եմ ուտում:

16. Ես կարծում եմ, որ ինչ-որ բան հիշելու համար այն պետք է պատկերացնել:

17. Ես ավելի հեշտ եմ սովորում բառերի ուղղագրությունը, եթե մատներով գրում եմ դրանց վրայով:

18. Ես ավելի լավ հասկանում եմ դասը կամ ելույթը լսելով, քան դասագրքում նույն նյութի մասին կարդալով:

19. Ես լավ եմ աշխատում խճանկարներով ու լաբիրինթոսներով եւ հեշտությամբ լուծում եմ հանելուկները:

20. Սովորելու ժամանակ սեղմում եմ ձեռքս ընկած առարկաները:

21. Նախընտրում եմ ռադիոյով լուրեր լսել, քան թերթ կարդալ:

22. Ես նախընտրում եմ կարդալ՝ հետաքրքիր նորություններ իմանալու համար:

23. Շփվելիս ես միշտ դիպչում եմ զրուցակցիս:

24. Ես ավելի լավ հետեւում եմ բանավոր հրահանգներին, քան գրավորներին: